

սրբատան ի ծածուկս: Եւ ի մտանել արեգական ելեալ անտի Դշի (7 Օգոստ.) ի հասարակ աւուրն հասաք ի Գալաթօլի, որ թարգմանի¹⁾ Աղվոր քաղաք: Կացեալ Դ. ժամաւ չափ ի պատիւս ծանօթից մերոց եւ ազգայնոց որ անդ, եւ անտի ելեալ առաւօտու Դշի (8 Օգոստ.) ի Պօղազ գնացաք. եւ յետ ժամու ինչ՝ ելեալ ի Պօղազէն հանդարտ հողմով Եշի (9 Օգոստ.) աւուրքք երեւկոյին արկաք զերկաթ յեզր Ֆօչայ: Եւ յերրորդ ժամու գիշերոյն ել հողմ ահագին եւ նաւավարք²⁾ վազվազ ելեալ ի ծով առագաստիւն եւ ոչ կարացին, զի սաստկանայր, եւ իջուցին ի վայր զամենայն զործիսն եւ լոկ փայտիւն մնային, զի խստանայր ևս քան զես. զեր յերկինս հայէաք եւ վայր ի ծով՝ ոչ ցամաք երեւէր եւ ոչ ինչ եւ մեծաւ հառաչմամբ եւ բազում լալիւ առ Տէր կարգայաք^(*) մինչ յԼ-րդ ժամու գիշերոյն: Եւ նա քստ բազում ողորմութեան իւրում գթացեալ, Լ-րդ ժամու գիշերոյն՝ մերձ առ լոյսն հաղիւ զաղաբեցաւ հողմն եւ փրկեցաք ի մեծ վտանգէն եւ ապա թացեալ զառագաստն սակաւ սակաւ՝ առ գիշերի աւետօքն Թ-րդ ժամու Զշի աւուրն (10 Օգոստ.) հասաք ի կղզին Սախրզոյ, եւ ելեալ արտաքս երեկոյին Շաբաթի (11 Օգոստ.) եւ Կիրակէի (12 Օգոստ.), որ տօն Փոխման Սուրբ Կուսի եւ Մօր Տեառն, մեծաւ խնդութեամբ չըջեալ ի զբօսանս եւ ի պարտէզս տեղոյն: Եւ ի հասարակել աւուրն, որ Օգոստոս ժի, ելաք անտի եւ այգուցն (13 Օգոստ.) Թ-րդ ժամու հասաք յԼստանքեօյն եւ ելաք չըջիլ ի տեղին եւ տեսաք զծառն չինարի մեծ, որ ունէր սիւնս իջ մարմարիոնեայ՝ եղեալ ի ներքոյ

1) Թարգմանի.

2) նսվավարք.

(*) Լուս. բազումք ընդ միմեանս կտակ առնէին եւ մեղայ Աստուծոյ տային եւ ... ձն ոչ կարէր իրիցուն հաղորդել զնոսա: